

25.8/7

Լ. Մ. ԿՐԱՊԻՎՆԵՐ



ԲԱՐՁՐ-ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿՈՆԽՈԶԱՅԻՆ ՆԱԽԻՐ

(ԿԱՏԱՐԵՑԵՔ
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԻՆԻՄՈՒՄԸ)

ԹԱՐԳ. Հ. Մ.

334
4-93

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏ.
ՄՈՍԿՎԱ ԽՈՍՏՈՎ-ԴՈՆ

24.05.2013

25.8.17

334
4-93

15 JAN 2010

Լ. Մ. ԿՐԱՊԻՎՆԵՐ

Դ Ե Պ Ի

ԲԱՐՁՐ-ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ՆԱԽԻՐ

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ԳԱՐՆԱՆԸ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒ- ԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարն իր վերջնականորեն մեջ հըշ-
գրիտ ու պարզ կերպով նշեց կենդանաբուծական պրոբլեմի (մեծ խնդրի)
լուծման ուղիները:

Գյուղացիական անասնապահությանը, վերջ հիմնականում մանր
ու սակավ-ապրանքային է, իր յետամնացության ու կտորակվածու-
թյան պատճառով ի վիճակի չէ բավարարելու մեր յերկրի պահանջնե-
րը. նա չի կարող բնակչության համար բավականաչափ միս ու մսա-
մթերքներ և արդյունաբերության համար կենդանական հումքեր մա-
տակարարել:

Ցեղակետ ընդունելով ծավալվող սոցիալիստական շինարարության
տեմպերը, ինչպես և գյուղատնտեսության զարգացման հեղափոխա-
կական պահանջներին համապատասխան՝ կենդանաբուծությանը սոցիալիս-
տական հիմունքներով արմատապես վերակառուցելու անհրաժեշտու-
թյունը, 16-րդ կուսհամագումարը տվեց մի հաստատուն առաջադրու-
թյուն՝ կենդանաբուծական հատուկ սովորոյների ու կոլխոզների կազ-
մակերպման, ինչպես նաև կոլխոզներում մաստու և կաթնատու աճա-
սունների, խոզերի նախիրներ, թռչնանոցներ կազմակերպելու միջոցով
ձեռք զարկել կենդանաբուծության ուժեղ զարգացման:

16-րդ կուսհամագումարի վորոշումների հասցատուն ու հեջեվորա-
կան կիրառումը խոտորագույն ճեղաւորմեք (сдвиг) առաջ բերեց կեն-
դանաբուծության վերակառուցման ասպարիզում: Հախառակ աշ—«ճախ-
լիկ» բրոկի (խմբակցության) ամեն տեսակ ուղորտունիստական մար-
դարեյություններին և ներքին թշնամիների փախարարության, կու-



3479
41

աակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը հաստատուն և ուղիղ քայլերով լուծում են կենդանաբուծութեան պրոբլեմը: 1930 թվականին կենդանաբուծական գլխավոր տրեստների սովխոզներում լիովին կատարված են նախիրների ծավալման պլանները: Կենդանաբուծական սովխոզների շինարարութեան հետ մեկտեղ՝ կոլխոզային սխտեմում ծավալվում է ապրանքային խոշոր կենդանաբուծութիւնը: Արդեն այժմ Հյուսիսային Կովկասի կոլխոզներում համայնացված են հարյուր-հազարավոր գլուխ անասուններ: Յերկրամասի զանազան ուսյոններում ծավալված են 130 կաթնա-ապրանքային ագարակներ (ферма) և 121 խոզաբուծական կոլխոզներ:

1931 թվականին կոլխոզային սխտեմը պետք է վճռական բեկում հաջողեցնի կոլեկտիվ կենդանաբուծութեան կազմակերպման մեջ: Նույն 1931 թվականի վերջում, ամբողջ ԽՍՀՄ-ում, կոլխոզներում խոշոր յեղ-ջուրավոր անասունների ընդհանուր քանակը պիտի հասնի մինչև 7 միլիոն 920 հազար գլխի, յեղած 4 միլիոն 604 հազարի փոխարեն: Խոզերի քանակը—մինչև 5 միլիոն 770 հազարի, յեղած 1 միլ. 370 հազարի փոխարեն: Բացի դրանից, 1931 թվականին կոլխոզները պիտի հանձնեն 1 և կես միլիոն հասակավոր խոզեր և խոզուկներ: 1931 թվականի վերջում ԽՍՀՄ-ում պետք է կազմվեն 742 հազար կաթնա-ապրանքային ագարակներ և 5000 խոզաբուծական կոլխոզներ:

Հյուսիսային Կովկասում, հնգամյակի յերրորդ տարում պետք է լինեն 245 կաթնա-ապրանքային ագարակներ, 56 արդյունաբերական, մասնաձեռն կոլխոզներ, 155 խոզաբուծական, 40 վոչխարաբուծական և 50 թռչնաբուծական կոլխոզներ, համապատասխան քանակությամբ ապրանքային նախիրներով:

1931 թվականին յերկրամասում կոլխոզային կենդանաբուծութիւնը կտա ապրանքային կենդանաբուծական արտադրանքի հիմնական մասը, վորը մթերվում է նույն թվականին, գյուղացիական սեկտորում:—կաթի ապրանքային մասի 77 տոկոսը, մատուռ անասնապահութեան մեջ—44,8 տոկոս, խոզաբուծութեան—60,4 տոկոս և վոչխարաբուծութեան մեջ—55,3 տոկոս:

Կառավարական առաջադրութիւնները պահանջում են ավելի լայն չափով ծավալել կենդանաբուծական կոլխոզներն և ուժեղացնել ապրանքային նախիրների կազմակերպման տեմպը կոլխոզներում: Այս խնդիրն ամենակարգ ժամանակամիջոցում կարող է լուծվի մի պայմանով, —յերե կոլխոզնիկների յեվ չհավոր-միջակ գյուղացիության լայն մասսաների ուսագործւթյունը գործնականի կենդանաբուծւթյան վերելի յեվ սոցիալիսական վերակառուցման գործում:

Կուսակցական կազմակերպութիւնների վորոշումների համաձայն, Հյուսիսային Կովկասը 1931 թվականին պետք է ապահովի բոլոր չքավոր-միջակ անտեսութիւնների կոլեկտիվացման վոչ պակաս, քան 80 տոկոսը (կոլեկտիվացումն արդեն հասած է 82 տոկոսի—Թարգմ.): Հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտումը նպաստավոր պայմաններ է ստեղծում ուժեղ, համայնացված կերի բազայի և կերի պաշարների—այսինքն կոլխոզներում համայնացված կենդանաբուծութեան զարգացման հիմնական նախադրւթյունների համար:

Պետք է ուղղակի ասել, վոր 1930 թվականին Հյուսիսային Կովկասի կոլխոզային սխտեմը բավականաչափ ուշադրութիւն չի նվիրել կենդանաբուծութեան պրոբլեմին: Մինչդեռ գյուղատնտեսական ամբողջ արտադրութեան վերելքի հաջողութիւնը սերտորեն կապված է կենդանաբուծական պրոբլեմի լուծման հետ:

Այս տարի Հյուսիսային Կովկասում կենդանաբուծութեան զարգացման վերելքի մեջ առանձնապես կարևոր դեր պիտի խաղան սովխոզներն ու կոլխոզները: Այս պատճառով հրատապ խնդիր պետք է լինի ամբողջ կոլխոզային հասարակայնութեան ուշադրութեան գորահավաքումն անասունների ապրանքային—մթերատու նախիրներ կազմակերպելու և նրանց կերով ապահովելու հարցերի շուրջը:

Կենդանաբուծութեան կամպանիան չի կարելի անցկացնել առանց կապակցելու հիմնական խնդրի—գարնանացանի կամպանիայի նախապատրաստութեան ու յերկրամասի համատարած կոլեկտիվացման ավարտման հետ:

Կենդանաբուծութեան մեջ հիմնական միջոցառումները մեկը հանդիսանում է անասունների կորստի վերացումը անտեսութեան մեջ: Կուլակային ագիտատորները չարաշահում են կերի պակասութիւնը և անհատականներին ու կոլխոզնիկներին դրդում են լիկվիդացիայի յենթարկել անասուններին:

Կուլակային ֆիսսարարութեանը պետք է հակադրվի պարզաբանական լայն կամպանիան: Յուրաքանչյուր կոլխոզնիկ և անհատական պետք է հասկանա, վոր անասունների (մանավանդ մատղաշ անասունների և ձիերի) լիկվիդացիան մի խայտառակ բեծ է գյուղերի (կոլխոզների) վրա և ցույց է տալիս վոչ միայն պետական, այլ և նույն-նիսկ սեփական շահերի չհասկացողութիւն: Կուլակի դեմ պետք է մղել վճռական պայքար, նաև նրա դեմ ձեռնարկելով վարչական ու դատական միջոցներ:

Կոլխոզային հասարակայնութիւնը, հողային կազմակերպութիւնների հետ միասին, պետք է տեղերում ստուգել, թե ինչպես են կա-

տարվում կենտրոնական ու յերկրային կառավարական օրգանների վորոշումները՝ ցեղային և մատղաշ անասունների մորթումը արգելելու հարցերի մասին:

Դրա հետ մեկտեղ տեղի յեն ունենում մատղաշ անասունների դնումներ և նրանց կենտրոնացումը հորթանոցներում և ձիանոցներում, ապահովելով նրանց անհրաժեշտ կերով, լծկան անասունների դնումներ և նրանց բաշխումը կոլխոզներում: Վերջին միջոցառումը հնարավորութուն կտա ավելացնել կոլխոզների կենդանի քարշող ույժը:

Յերկրորդ հիմնական միջոցառումը հանդիսանում է ձմեռվա ընթացքում լծկան անասունների պատրաստումը (կերակրելն ու խնամքը) զարնանացանի կամպանիայի համար:

1930 թվի զարնանացանի կամպանիայի փորձը ցույց տվեց, վոր լծկան անասուններն, ինչպես հարկավոր է, չեն յեն պատրաստված դաշտերում նրանց սպասող աշխատանքների համար: Այս ձեղքվածքն ընթացիկ տարում չպետք է տեղ ունենա: Անհրաժեշտ է հենց այժմյանից ամենամեծ ուշադրութուն դարձնել կոլխոզներում, ինչպես և անհատական չքավոր-միջակ տնտեսութուններում ձիերի ու յեղենների աշխատունակության աստիճանն ստուգելու վրա: Անհրաժեշտ է ծավալել լայն բացատրական աշխատանք՝ կերի պաշարները ձիշտ և հրմտորեն ոգտագործելու, լավագույն կերի հատուկ պաշար ստեղծելու այն քարշող ույժի համար, վորը գիրացվելու կարիք ունի:

Ամբողջ լծկանը պետք է խմբերի բաժանվի բոս նրանց մարմինների գիրություն, պետք է տեղ ունենա կերի բաժանումն առանձին անասուններին, հիվանդ ձիերը պետք է հանձնվեն անասնաբուժական կայանները, բուժելու համար: Կճղակները պետք է մանրակրկիտ կերպով դիտել և միջոցներ ձեռք առնել պայտելու համար անհրաժեշտ գույքով ապահովվելու: Ամբողջ լծասարքը պետք է ստուգվի, վորպեսզի պարզվի, թե նա վորչափ պիտանի յե աշխատանքի համար և անփութ է դուրդատնտեսական կենդանուն. հարկավ, անցյալ տարի անհարմար խոմուտներով, թաժքերով ու թիկնափոկերով բավական թվով լծկաններ ցնամվեցին:

Ձիերի ու լծկան յեղների բաժանումը բրիգադներում պետք է կատարվի առանձնապես մանրակրկիտ կերպով: Թույլ կենդանիներին պետք է հավասարապես բաշխել բոլոր դաշտային բրիգադների վրա: Լուծը տեղի յե ունենում յուրաքանչյուր կենդանու աշխատունակության հաշվառմամբ:

Խլացավ հիվանդությամբ կասկածվող ձիերը, վորոնք ջոկված են

ձիերի ընտրության ժամանակ, չպետք է լծվեն առողջ ձիերի հետ միասին:

Անհրաժեշտ է կազմակերպել այդպիսի առողջ ձիերից առանձին բրիգադներ, նրանց համար հատկացնելով առանձին հողամասեր: Վոչ պակաս կարևոր նշանակութուն ունի քոս ունեցող ձիերին չլծելը:

Կոլխոզներն իրենց պիտի ապահովեն այնպիսի մաքրկանց կադրով, վորոնք կարող են դառնում առաջին ոգնությունը հասցնել հիվանդացած լծկան անասունին:

Յերրորդ հիմնական հարցը, վորի վրա հարկավոր է սրել գյուղխորհրդների, կոլխոզների ու սովխոզների ուշադրութունը, դա տվյալ շինարարական սեզոնում անասունների ու թռչունների համար շենքերի կառուցման ապահովումն է: Կառուցումը մեծ նշանակութուն է ստանում, քանի վոր նրանից կախված են անասուններին ու թռչուններին խնամելու այն պայմանները, վոր կարող են ստեղծել կոլխոզներն ու սովխոզները, ապրանքային նախիրների համար: Պետք է կատարվի միջոցների և շինանյութերի բոլոր տեղական պաշարների գորահավաք: Նույն չափով պետք է հոգ տանել սիլոսային շինարարության նյութերի մասին: Այս գործին պետք է ներդրվել կանանց ակտիվին ու կոմսոմոլին: Ամբողջ շինանյութը պետք է հաշվի առնվի: Այն ամենն, ինչ վոր կարելի յե քանդել ու վերցնել շինարարական սեզոնում կոլխոզների, խոզանոցների, թռչնանոցների և այլ շենքերի համար ոգտագործելու, — պետք է հաշվել ու հաշվի առնել:

Միաժամանակ պետք է դիտել կենդանիների համար արդեն յեղած շենքերն և հենց այժմ ավարտել անհրաժեշտ մանր վերանորոգումները — ներքին կահավորում, պարզ ձևի տաքացում և լուսավորութուն:

Ամենագլխավոր հարցերից մեկը հանդիսանում է 1931—32 թվականի համար կերի հայթայթման պլանի հասցնելը մինչև ստորին տնտեսական միավորը (կոլխոզ, սովխոզ, անհատական տնտեսութուն): Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր տնտեսության մեջ մշակվի կերի հաշվեկշիռ (բալանս): Յուրաքանչյուր տնտեսութուն պետք է ունենա կերի անհրաժեշտ քանակութուն և կերի կանաչների սերմապաշար այն չափով, վորն ապահովում է 1932 թվականի ցանքը: Կոլխոզները պետք է հենց այժմ ստուգեն 1932 թվականի կերի կուտուրաների ցանքի ստուգիչ թվերը: Անհրաժեշտ է, վորպեսզի կերի քանակը համապատասխանի յեղած անասունների թվին և համախառնված նախրի ծրագրված աճին: Առանձնահատուկ ուշադրութուն պիտի նվիրվի կերի

սիրոսացման պլանի կատարման, քանի վոր սիրոսացված կերբ պտ-
շարի գոյութունը կարող ե արագութեամբ մեղմացնել կերբ զժամարու-
թյունները:

Չի կարելի անտես անել նաև զուգավորման կամայնիայի նախա-
պատրաստութիւնը: Գյուղատնտեսներն ու կոլտնտեսները պարտավոր են
այդ հարցը մտցնել զարնանացանի կամայնիայի պլանի մեջ: Անհրա-
ժեշտ ե հայտնաբերել և լիովին հաշիւ առնել գյուղատնտեսական կեն-
դանիւնների բոլոր տեսակների արտադրողներին, վորոնք ընդունակ են
զուգավորման համար: Կոլտնտեսների վարչութիւնները պետք ե հոգ տա-
նեն, վորպեսզի հատուկ շնքեր տրամադրվեն կամ հարմարեցվեն զու-
գավորման կայանների համար: Բոլոր արտադրողներին պետք ե հետա-
զոտե անասնաբուժական պերսոնալը և նրանք պետք ե դրվեն պահ-
պանման ու խնամքի պատշաճ պայմանների մեջ: Զուգավորման կա-
յանները պետք ե ապահովել վորակով ու քանակով բավականաչափ
կերով:

Համայնացված նախրի վորակային ճիշտ ընտրութիւնը պահան-
ջում ե, վորպեսզի վաղ գարնանը տեղի ունենա բոլոր անասունների
մանրակրկիտ դիտում: Այս դիտման ժամանակ պետք կլինի համայնաց-
ված նախիրներից վտարել ամբողջ թույլ, սակավարժեք ու անպետք
անասունները, այնպես, վորպեսզի նրանք ոգտադրծվեն միս ստանալու
համար: Միաժամանակ պետք ե միջոցներ ձեռք առնել՝ լրացնելու «Սո-
յուզմաստ»-ի և այլ կազմակերպութիւնների միջերակայաններն և ան-
ասունների բազաները պահանջված քանակութեամբ անասուններով:

Կոլտնտեսների ու սովետների նախիրների անասնաբուժական—
սանիտարական դրութեան վերաբերմամբ լայն բացատրական աշ-
խատանքը, համայնացված կենդանիների հիվանդութիւնների ու կո-
տորածի բոլոր պատճառների հայտնաբերումը—չափազանց մեծ նշա-
նակութիւն ունի: Կոլտնտեսիկներից ու կոլտնտեսուհիներից պետք ե
կազմակերպել հատուկ բրիգադ (նաև անասնաբուժական պերսոնալի և
զոոտեխնիկի պարտադիր մասնակցութեամբ), վորին տալ հետևյալ ա-
ռաջադրութիւնը.—մանրամասնորեն հետազոտել համայնացված կեն-
դանիւնների պահպանման, խնամքի և աշխատանքի համար ոգտադրծե-
լու պայմանները: Բրիգադը պարտավոր ե դիտել կենդանիների բոլոր
շնքերը, ստուգել, թե արդյոք կատարվում են ներքին կարգապահու-
թեան կանոնները, կատարվում են բրիգադիւնների ցուցմունքները՝
խնամելու, կեր տալու և ջրելու մասին, արդյոք տեղի ունենում ե կեն-
դանիւնների կանոնավոր անասնաբուժական-սանիտարական դիտում, ար-
դյոք կատարվում են անասնաբուժական հսկողութիւն պահանջները

համայնացված նախրի առողջացման վերաբերմամբ, արդյոք տարվում
ե անասունների հիվանդութիւնների ու կոտորածի հաշվառք և խն-
միջոցներ են ձեռք առնվում անասնաբուժական պերսոնալի մասնա-
նըշած թերութիւնները վերացնելու համար:

Բրիգադը մի առանձնահատուկ ուշադրութիւն պիտի դարձնի սնո-
սութեան մեջ վարակիչ հիվանդութիւնների տարածմանը կանխելու վե-
րաբերմամբ անասնաբուժական միջոցների կատարման ստուգման: Ստուգ-
վում ե, թե արդյոք տնտեսութիւնն ապահովված ե չեղճացմամբ և
կարանտինի բազաներով, այլ և կ՞ արդյոք կահավորված անասնական
դերեզմանոց:

Կոլտնտեսները պետք ե լուրջ ուշադրութիւն դարձնեն շրջակա ան-
հատական տնտեսութիւնների անասունների առողջացման հարցին, այդ
աշխատանքը կապելով անհատականներին կոլտնոգ ներգրավելու հետ:
Կան շատ դեպքեր, յերբ անհատականը թաքցնում ե վարակիչ—հի-
վանդ անասունը (դաբադ), հանդիսանալով մեղավոր՝ հիվանդու-
թիւնը դեպի համայնացված նախիրները տեղափոխվելու մեջ: Ահա-
ժեշտ ե, վոր գյուղատնտեսների գ. տ. արտադրական խորհրդակցու-
թիւնների հատուկ կոմիսիաների կամ բրիգադների միջոցով ապահով-
վի նաև անհատական սեկտորի անասունների գլխովին ստուգումը:

Կոլտնտեսների առաջ դրված ե մի մարտական խնդիր—լիկվիդացիա-
յի յենթարկել խլացավը (саль): Այս պատճառով պետք ե այնպես անել,
վորպեսզի թե կոլտնոգի և թե անհատականի վոչ մի ձին դուրս չմնա
անասնաբուժական-սանիտարական ստուգումից ու հետազոտութիւնից:
Կոմիսիտականների և պիոներների բրիգադները պետք ե իմաց ասն
այն տեղերի ամբողջ բնակչութեանը, վորտեղ հետազոտվելու յեն ձիւ-
քը, վորպեսզի վոչ վոք հիմք չունենա ասելու, թե չի իմացել հիվան-
դութիւնը պարզելու համար ձիւերին ստուգելու մասին:

Այդ բոլոր միջոցառումների կիրառման մեջ պետք ե անպայման
մասնակցութիւն ունենա կանանց ակտիվը:

Կոնջ դերն առանձնապես մեծ ե թոչնարութութեան մեջ:

Բավական ե ասել, վոր Հյուսիսային Կովկասը պետք ե առ թըռ-
չունների չաղացման կայաններին, մորթելու համար,—3,710,000 հափ,
184,300 սագ, 164,560 բադ և 74,180 հնդուհով: Յեթե սա վերածենք
մսի, ապա յերկրամասի թոչնարութութիւնը պիտի տա շուկային
357,698 փութ, կամ 5962 տոնն թոչունի միս: Այս բանն, ինչպես և
այն բոլոր խնդիրները, վորոնք կապված են կենդանաբուժութեան վե-
րելքի հետ, պարտավորեցնում են մարտականորեն ծախելու կանանց
գ. տ. արտադրական խորհրդակցութիւնների, կանանց ակտիվի ու բո-

լոր կողմնասուհիներին, չքավորուհիներին, բատրակուհիներին և միջակուհիներին աշխատանքը: Յեւ, ամենից առաջ, պետք է մանրամասնորեն մշակել կենդանաբուժական-անասնաբուժական միջոցառումների պլանը:

16-րդ կուսամասը, վճռելով կենդանաբուժության պրոբլեմը, մասնաշնչեց յերկու կենդանի մեքենա.—«մոտակա տարիներում մսի արտադրության մեր գլխավոր մեքենան խոզն է», «յերկրորդ ֆաբրիկան, գլխավորապես կաթի,—հանգիստանում է կովը»:

Ամերիկայում բնակչության գործածած ամբողջ մսի 61 տոկոսը կազմում է խոզի միսը և խոզի ճարպը: Խորհրդային Միության մեջ, մասմթերումների պլանում, մասնատակարարման գործում խոզը կազմում է միայն 5,7 տոկոս:

1931 թվականին կուսակցությունն ու կառավարությունը տալիս են հաստատուն առաջադրություն—աշխատել, վորպեսզի խոզի միսը կազմի մասնատակարարման պլանի 22 տոկոսը, իսկ 1932 թվականին խոզերի տեսակարար կշիռը հասցնել մինչև 50 տոկոսի:

Հյուսիսային Կովկասի կոլխոզները 1931 թվականին պետք է հանձնեն 166,100 գլուխ ապրանքային խոզ և 775,000 ցենտներ կաթ:

Խոզաբուծությունը, թռչնաբուծությունը, կաթնագործությունը մեծ մասամբ զտնվում են կտանաց ձեռքում: Այժմ կտանաց խնդիրն է՝ ապահովել այդ մասնաճյուղերի ապրանքային արտադրանքի յեղը գեպի շուկա:

Կուսանասուհիներ, բատրակուհիներ, չքավորուհիներ ու միջակուհիներ պետք է ամենատևիվ աշխատանքի ներգրավվեն համայնացված նախարի առողջության, կաթի մաքրության, խոզի ու գոճիների ճիշտ պահպանման, ածան հավերի ու ճտերի պահպանության, ամենամեծ չափով ձու հավաքելու, ինկուբատորների բեռնվածության առաջադրությունները կատարելու, կերի դործն ապահովելու համար մղվող պայքարում:

Հյուսիսային Կովկասը հացահատիկային, անասնապահական ուսյունից նշանակելի չափով պիտի վերափոխվի տեխնիկական կուլտուրաների և ինտենսիվ կենդանաբուժության ուսյունի: Հյուսիսային Կովկասը, համատարած կուլտիվացման ուսյունը, ամենահարուստ ապրանքային կենդանաբուժական ուսյունը, այժմ պետք է իր տեղը բռնի խՍՀՄ-ում:

Այս պատճառով հարկավոր է, վոր կենդանաբուժության մասին խոսեն վոչ միայն յերկրամասի կենտրոնում, ուսյուններում, այլ և դյուղ-խորհրդներում, կոլխոզներին ու սովխոզներին արտադրական խորհրդակցություններում:

Պետք է լայնորեն ծավալվի դործնական աշխատանքը կենդանաբուժական կոլխոզներ կազմելու, մթերատու անասունները համայնացնելու, հազարավոր արտադրական խորհրդակցություններ անցկացնելու համար, վորտեղ պիտի մշակվեն դոտեխնիկական ու անասնաբուժական միջոցառումներ և ընտրվի անասնաբուժական, անասնաբուժական լիազորների մի ամբողջ բանակ: 1931 թվականին պետք է ծավալվի բազմահարյուր անասնագետների, հորթանոցների, խոզանոցների, թռչնանոցների և այլն շինարարությունը:

Բանվոր դասակարգն ու նրա կուսակցությունն առանձին հսկողության տակ են առել կենդանաբուժության ծրագրի կատարումն և այդ առանձին հսկողությունը պետք է սահմանվի յուրաքանչյուր կոլխոզում ու սովխոզում:

ԴԵՊԻ ՀԱՄԱՅՆԱՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կոլխոզ-սովխոզային հիմունքով լուծելով հացահատիկային պրոբլեմը, Հյուսիսային Կովկասը պատմական խնդիր—սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու համար մղած պայքարում մարտականորեն սկսեց կենդանաբուժության վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով:

«Դաշտագործության բնագավառում, ինչպես յերևում է, մեզանում բանն արդեն վատ չէ: Կուսակցությունն այժմ արդեն իրավունք ունի ասելու, վոր նա հիմնականում լուծեց հացահատիկային պրոբլեմը:

Հիմա խնդիր կայանում է նրանում, վորպեսզի վոչ քե խոսով, այլ գործով, ինչպես հաբելավոք է, բոլեփկորեն զբաղվել գյուղացնես-սուքյան այլ նյութերի կազմակերպումով—հենց կոլխոզներում, հասարակական արտադրության բազայի վրա, վորովհենք հիմա կենդանաբուծությունը զարգացնել անհասական ցնեսուքյան հողի վրա—այդ բանն անհուսալի յե: Կազմակերպել, բարձրացնել կենդանաբուժությունը, վորն այժմ անհրաժեշտ է, վորի պակասություն սրվածությունն այժմ զգում է ամեն մի բանվոր՝ պարենային մատակարարման մեջ, յուրաքանչյուր ձեռնարկություն—հումուլթի մատակարարման մեջ,—ուրիշ ճյուղերի այս վերելքը հնարավոր է միայն հասարակական արտադրության հիմունքով: Ահա թե ինչու հենց այժմ պետք է կատարել աշխատանք ծավալվի տնտեսության այս ուղղությամբ, քանի վոր մենք արդեն ապահովել ենք առաջին հաջողությունները հացահատիկային պրոբլեմի լուծման բնագավառում» (Ա. Ա. Անդրեև):

Բողոքական յերկրորդ գաղաղնը որակարգում խնդիր դրեց

արագ տեմպերով առաջ շարժել կենդանաբուծական տնտեսութեան համայնացումը:

Գարնանացանի կամպանիան հաջող անցկացնելու և համատարած կոլեկտիվացումն ավարտելու համար պետք է պայքար մղել ոպորտունիստական, ինքնահոսի տրամադրութեւնների դեմ: Հարկավոր է իրոք մարտականորեն կազմակերպել առաջիկա կոլտոգային ցանքը և գլխավորել կենդանաբուծութեան համայնացման գործը:

1930 թվականին մեր յերկրամասի կոլտոգները չոգտադործվեցին համայնացված կենդանաբուծութեան կազմակերպման բոլոր հնարավորութեւնները: Շատ ուայոններում ապրանքային համայնացված նախրի կազմակերպման հարցերը դուրս մնացին կոլտոգների վաբչութեւնների տեսողութեան դաշտից: Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութեւնները չնպատակադրվեցին քանակապես ավելացնելու և վորակապես բարելավելու համայնացված նախրը: Կոլտոգնիկների առաջ չդրվեց յերկրորդ կովերը համայնացնելու վերաբերյալ դյուղատնտեսական արտելի կանոնադրութեւնը կատարելու հարցը, վորի շնորհիվ այդ կովերն ընկնում եյին մասնավոր շուկա: Շատ կոլտոգներ իր ժամանակին կերով չապահովեցին իրենց և միջոցներ ձեռք չառան կենդանաբուծութեան ձյուղերը հասցնելու այնպիսի դրութեան, վորպեսզի գործնականապես ապացուցել կոլտոգնիկին համայնացված նախրի տավելութեւնները:

Գարնանացանի կամպանիան կնախորոշի հացահատիկային պրորելմի վերջնական լուծումը, կենդանաբուծութեան և բանջարեղենի տընտեսութեան ամրապնդումն ու լայնացումը: Բոլշեկիյան յերրորդ քարունը պարտավորեցնում է կոլտոգային ախտիվին՝ իր կազմակերպվածութեան, կարգապահութեան և աշխատանքային գրոհի ամբողջ ույժն ուղղել դեպի հիմնական միջոցառումների լիակատար անցկացումը՝ ցանքսային առաջադրութեան պլանի հարյուր տոկոսով կատարումն ապահովելու համար (հացահատիկային, տելնիկական, բանջարանոցային ու բանջարեղեն կուլտուրաներ, կերի կանաչներ և այլն):

Կենդանաբուծական-անասնաբուծական լիադորների վրա պարտականութեւն է ընկնում ապահովել հետեյալ միջոցառումների կատարումը. —

1) Լծկան անասունների պահպանումն ու պատրաստութեւնը ցանքսային աշխատանքների համար:

2) Վճռական պայքար կազմակերպել առանձին անհատական տընտեսութեւնների կողմից ձիերը, յեղջյուրավար անասունները և ամեն

տեսակ գ. տ. կենդանիների մատղաշները ծախսելու և կոլտոգների կողմից լծկան անասուններն առանց պատճառի բրակ անելու դեմ:

3) Անհապաղ աշխատանք ծավալել կոլտոգներում համայնացված ապրանքային նախիրներ կազմակերպելու համար:

4) Ուժեղացնել միջոցառումները կոլտոգներում միթերելու և անասուններին հատկացնելու այնպիսի քանակութեամբ կեր, վորն ապահովում է դաշտային աշխատանքների անընդհատ կատարումը:

5) Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ դեպի համայնացված կենդանիներն անփութ ռ. անխնամ վերաբերմունքը վերացնելու համար:

6) Անասնաբուծական միւնիստի հիմնական պահանջները կիրառել, վորոնք ապահովում են կոլտոգային նախիրների առողջացումը:

7) Ապահովել զուգավորման կամպանիայի անցկացումը:

1930 թվականին շատ ուայոններում անասնաբուծական ու անասնաբուծական լիադորները սխալ ոգտագործվեցին, կամ ուղղակի թողնվեցին բախտի բերմունքին, առանց վորևե ղեկավարութեան:

Գալիք դարնանային կամպանիայում, կենդանաբուծութեան բարձրացման ու առողջացման ասպարիզում դյուղական հասարակայնութեան դերի այդպիսի թերադնահատումը չպիտի տեղ ունենա: Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութեւնները (գյուղխորհրդաներին, կոլտոգներին, բրիգադներին կից) և մասնավորապես կանանց խորհրդակցութեւնները պետք է դարնանային կամպանիայի ընթացքում լրջորեն ձեռնարկեն կենդանաբուծութեան գործին: Բոլոր անասնաբուծական և անասնաբուծական լիադորները պետք է հաշիվ տան իրենց աշխատանքի մասին և պարզ ու ճշգրիտ ցուցմունքներ ստանան յերկրորդ կոլտոգային դարնանը կատարելիք իրենց աշխատանքի պլանի մասին:

Անասնաբուծական-անասնաբուծական լիադորները պետք է հիշեն, վոր դարնանացանը և անասունների ապրանքային նախիրներ ստեղծելու կամպանիան պետք է անցնի դասակարգային սրված պայքարի և վերացվող կուլակութեան հուսահատական դիմադրութեան պայմաններում: Կուլակին հասցրված է ամենադաժան հարված, բայց կուլակը դեռ վերջնականապես չի խորտակված, նա փորձում է դժվարացնել սոցիալիզմի առաջխաղացումը դյուղում: Կոլտոգային սխտեմի հիմնական խնդիրը — արագ տեմպերով առաջ շարժել կենդանաբուծական տնտեսութեան համայնացումը, — պետք է կատարվի կենդանաբուծական-անասնաբուծական լիադորների, կանանց գ. տ. արտադրական խորհրդակցութեւնների և գյուղի կուսակցական ախտիվի ամենաակտիվ մասնակցութեամբ:

Կուսակցութիւնն ամբողջ կոլխոզային ակտիվից պահանջում է ամենաարագ կերպով կատարել 16-րդ կուսհամագումարի վորոշումները կոլխոզային ապրանքային կենդանաբուծութեան մասին: Հնգամյակի 3-րդ տարին պետք է դառնա կենդանաբուծութեան պրոբլեմը հիմնականում լուծելու տարի: Այս պատճառով կենդանաբուծական-անասնաբուծական լիազորների աշխատանքը պետք է ծավալվի բոլոր կայան տեմպերով:

Պայքարելով աջ ոպորտունիստական ինքնահոսի—դիւսիւր վրտանդի դեմ, մենք միաժամանակ պետք է վերացնենք ամեն տեսակ «ձախ» մտրակումներն ու վարչականութիւնը:

Կոլխոզային մակընթացութեան ներկա աճող ալիքի պայմաններում մեզ անկասկած կհաջողվի հասնել համայնացված կենդանաբուծութեան բոլոր ճյուղերի վորակային ու քանակային աճման:

ԱՌՈՂ ԶԱՅՆԵՆՔ ՆԱԽԻՐՆԵՐԸ

Հյուսիսային Կովկասը պետք է դառնա խոշոր կենդանաբուծութեան և տեխնիկական կուլտուրաների յերկրամաս, վորը պետք է նշանակալից քանակութեամբ ապրանքային արտադրանք արտահանել ներքին ու արտաքին շուկաները: Կենդանաբուծութեան վերակառուցումը պիտի ոժանդակել մի զվարութիւնների արագագոյն վերացման և կաշու, բրդամշակ և այլ արդյունաբերութիւններին անհրաժեշտ կենդանական հումքի մատակարարելու պրոբլեմի լուծման:

Այս մոմէնտները մեր յերկրամասի կոլխոզային սիստեմի առաջ դնում են կենդանաբուծութեան խոշոր ճյուղերի առողջացման համար շտապ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտութեան հարցը:

1930 թվականին վարակիչ ու անվարակիչ հիվանդութիւններից կոտորված անասունների նախնական հաշվարկումը մեզ տալիս է բավական անմխիթար տեղեկութիւններ: Ընթացիկ տարում կոլխոզներում ուժեղ չափով տարածվել է քոսը, դաբաղը, խոզերի ժանտախտը, վոչխարների ծաղիկ հիվանդութիւնը, հավերի խոլերան և այլն:

Սակայն, բացի յերկրամասում վարակիչ հիվանդութիւնների նշկատմամբ անհաջողակ վիճակից, յերբեմն նաև բացասական դեր է խաղացել կոլխոզների հանցավոր անփութութիւնը վերաբերմունքը դեպի համայնացված նախիրը:

Վորպես որինակ, կարելի յե բերել հետևյալ փաստերը. Ստալինի անվան գյուղատնտեսական արտելում (Մայկոպի ռայոնի Գիւրգինսկայա ստանիցա) վարչութիւնը բոլորովին միջոցներ ձեռք չառավ հիվան-

դացած խոզերն իր ժամանակին առողջներից առանձնացնելու համար: Հետևանքն այն յեղավ, վոր 1930 թվականի հուլիս-ոգոստոսում 183 գլուխ խոզերից 32-ը կոտորվեցին ժանտախտից, այսինքն յեղած խոզերի 17 տոկոսը:

ԲԳՏ բրիգադը, վորը 1930 թվականի նոյեմբերին այցելեց «Մեծ Հոկտեմբեր» կոմունան, պարզեց, վոր այն շենքերը, վորտեղ տեղավորված են համայնացված անասունները, մաքրվում են առավոտյան ժամը 10-ին, փոխանակ 7-ին մաքրվելու: Անասունների համար հատկացված կերը սխալ եր պահպանվում: Թոչնանոցում չկային թռչունների կուտ տայու հաստատ վորոշված ժամեր, կուտը տրվում եր միայն յերեկոյան, յերբ թռչունները թառում եյին:

Մի կոմիսիա, վորը 1930 թվականի նոյեմբերին հետադոտել է «Ճանապարհ դեպի սոցիալիզմը» կոմունան, (Բեյսուգ. Տիխոբեցկու ռայոն), կատարյալ անտնտեսավարութիւն է գտել կենդանաբուծական բրիգադայում: Կովանոցներում յեղել է սաստիկ կեղտ, չորս կողմից միջանցիկ քամիներ, վոչ մի կարգապահութիւն: Կովկթուհիների գոգնոցները կեղտոտ: Խոզերը տեղավորված են յեղել նեղ, կեղտոտ շենքում (սրահում): Հղի և գոճիներով խոզերը, ցեղային խոյակներն ու խոզուկները—բոլորը խառնված են յեղել: Անասունների տակ վոչինչ չի փռվել: Կերը տրվում եր հատակի վրա: Այլանդակութիւնները տեղի եյին ունենում նաև ախոռներում: Չորս կողմը կեղտ, ախոռում ծխում են, կերը տրվում է մի անգամից ամբողջ գիշերվա համար, ցեղային արտադրող ձին թափառում եր անխնամ, իսկ մյուս ձիերը տեղավորված եյին բացողյա բազայում և կանգնել եյին մինչև փորերը կեղտի մեջ: Այդրներին արոտատեղ են քշում յեղջուրավոր անասունի հետ և յեղել է դեպք, յերբ ցուլը քիչ է մնացել յեղջուրով խոցի քուռակին:

Բեյսուգ ավանի խորհուրդն և տեղական ռայոնը առանց կերպ բոթում եյին «Ճանապարհ դեպի սոցիալիզմը» կոմունայի վարչութեանը, սակայն, ինչպես գրանցված է պաշտոնական փաստաթղթերում, «կոմունայի դեկավարները թեթև եյին վերաբերվում դեպի գ. խ. պահանջների կատարումը և բոլորովին անտարբեր եյին նայում կենդանաբուծութեան վերելքի գործին»:

Անասուններին ու թռչուններին այդպես պահելով իհարկե չի կարելի հաջողեցնել նախրի բարձր ապրանքայնութիւնը:

Բոլորովին ուրիշ դրութիւն է տիրում այն կոլխոզներում, վորտեղ բոլոր անդամներն ենտուղիազմով ու եներգիայով նվիրվում են այդ գործին: Վերցնենք թեկուզ «Բանվորների ու գյուղացիների միու-

թիւն» կոմունան (Միլլերովի ուսումնական)։ Այստեղ բոլոր կոմունաները միանգամայն շահագործւած են համայնացւած նախրի վորակային ու քանակային բարելավման մեջ։ Վորքան հերոսութիւն և հոգատարութիւն են հայտնաբերել կոմունայի անդամները խողանոց և թռչնանոց կառուցելիս։ Այստեղ յուրաքանչյուր ճյուղ ունի հաստատապես ամրացւած մարզիկ, վորոնք պատասխանատու յեն իրենց գործի համար։ Ներքին կարգապահութիւնը ճշգրիտ է և ամեն մեկը բարեխղճութեամբ կատարում է իր պարտականութիւնները։

Համայնացւած տնտեսութիւնն որինակելի կերպով վարելու նըմուշներ կարող են ցույց տալ նաև Գյորգիւսկու, Յեսենտուկի, Մինե-րալվոգսկու ուսումնական թռչնաբուծական կոլխոզներն, ինչպես նաև Սալսկի ուսումնական թռչնաբուծական կոլխոզներն։ Այստեղ թռչնաբուծութեան բարձրացման գործին կոլխոզնիկները նվիրում են ամենամեծ ուշադրութիւն։ Այսպէս, հալիերի ածանութեան միջին չափը 8 ամսվա ընթացքում տատանւում է 80-ից մինչև 112 ձկի մեջ, 1000—1500 հավ ունեցող տնտեսութիւնում, մինչդեռ անհատական տնտեսութիւններում ամեն մի ածան հալին ընկնում է 30—40 ձու։

Կենդանաբուծութեան առողջացման գործին բոլշևիկական մոտեցման և կազմակերպւածութեան նմուշ կարող է ծառայել Շահումյանի անվան կոմունան (Գյորգիւսկի ուսումնական)։ Այստեղ դիտւում է հավի յուրաքանչյուր դիակ և յերբ հայտնաբերվեց խոլերան, ամբողջ կոմունան վորքի հանվեց։ 24 ժամվա ընթացքում գործադրվեցին բոլոր անհրաժեշտ հակախոլերային միջոցները և տնտեսութիւնը (6000 հավ) միայն մի քանի հատ հավ կորցրեց։ Միևնույն ժամանակ «Կարմիր Փարոս» կոլխոզի թռչնաբուծական տնտեսութեան մեջ (Միլլերովի ուսումնական), շնորհիվ վարչութեան դանդաղաշարժութեան և հակախոլերային միջոցառումների թերազնահատութեան, 4000 գլուխ ցեղային թռչուններից մնաց մոտ 500 գլուխ։ Մնացած քանակութիւնը կամ կոտորվեց խոլերայից, կամ մորթվեց, իբրև այդ հիվանդութեամբ կառնածելի։

Բոլոր վերոհիշյալ վիստերը վկայում են այն մասին, վոր դեռևս վոչ բոլոր կոլխոզներն իրենց առաջ խնդիր են դրել իջեցնել կորստները համայնացւած տնտեսութեան մեջ և ամենակարճ ժամանակամիջոցում առողջացնել կենդանաբուծութիւնը։

Կուսակցական յերկրային վեցերորդ համագումարը, հաշվի առնելով, վոր Հյուսիսային Կովկասը կարևորագոյն վարակիչ հիվանդութիւնների զարգացման աստիճանով առաջին տեղն է բռնում խորհրդային Միութեան մեջ, առաջադրութիւն տվեց՝ հասարակական և վարչական միջոցներով սխտիմի միջոցով հասնել անասունների այնպիսի

պահվածքի և անասնաբուժական սպասարկման, վորպեսզի հնգամյակի վերջում կենդանաբուծութեան բոլոր տեսակների վերաբերմամբ գոնե 2 անգամ պակասեցնել անասունների կոտորման տոկոսը։ Այս վորոշումը նորից հաստատված է Համկոմկուսի (Բ) Յերկրկոմի վերջին (յերրորդ) պլենումի կողմից։ Այս հարցի շուրջն իր ծանրակշիռ խոսքն ասաց նաև կոլխոզնիկների և չքավոր-միջակ տնտեսութիւնների ներկայացուցիչների յերկրային համագումարը, վորը տեղի ունեցավ 31 թ. հունվարին։ Համագումարը պարտավորեցրեց յերկրամասի բոլոր կոլխոզներին՝ անհապաղ ապահովել լծկան անասունների (վորն առայժմ հանդիսանում է մեր դիսավոր քարշող ուժը) լրիվ պահպանումն ու տնտեսական նախապատրաստութիւնը ցանքսային աշխատանքներին։ Անհրաժեշտ է ծավալել անխնա պայքար անասունների ծախսման և դեպի հասարակական անասունները միասարար վերաբերմունքի դեմ։ Պետք է ուժեղացնել կոլխոզներում ապրանքային կենդանաբուծութիւն կազմակերպելու աշխատանքը, ըստ վորում պետք է կատարվի բացատրական լայն աշխատանք և ցուցադրվեն կոլխոզային կենդանաբուծութեան հսկայական առավելութիւններն անհատականի հանդեպ։

Համայնացւած նախրի յեկամտաբերութիւնը, կենդանաբուծութեան առանձին ճյուղերի վերադիր ծախքերի իջեցումը, ապրանքային արտադրանքի արտածման ապահովումն—այս բոլորը սերտ կերպով կապված է կոլխոզային կենդանիների առողջութեան վիճակից և անասնաբուժական կարգով անցկացվող միջոցառումներից։

Վերևում մենք խոսեցինք այն մասին, վոր 1930 թվականին յեղել են անասնաբուժական որենքների պահանջների շատ խախտումներ։ Հետևանքն այն յեղավ, վոր վարակիչ հիվանդութիւնները լայն չափով տարածվեցին և վիճեցին համայնացւած նախրի աճումը։ Ընթացիկ տարում պետք է ուղղվեն անցյալի բոլոր սխալները։

1931 թվականի դարունը նշանավորվում է անասնաբուժական ցանցի լիակատար վերակազմութեամբ և նրա փոխանցմամբ՝ դեպի սոցիալիստական սեկտորի ավելի լայն սպասարկումը։ Ամբողջ ստորին անասնաբուժական ցանցին տրված է առաջադրութիւն՝ վորքան կարելի յէ լայն չափով ընդգրկել կոլխոզներում ապրանքային նախիրների ստեղծման և կենդանաբուծութեան հետագա համայնացման աշխատանքը։

Սակայն անասնաբուժական աշխատողների աշխատանքը շոշափելի արդշունքներ կտա միայն այն դեպքում, յեթէ կոլխոզային ակտիվը մարտականորեն ձեռնամուխ լինի կենդանաբուծութեան առողջացման գործին։ Բրիգադային գյուղատնտեսական խորհրդակցութիւններն ա-

առանձնապես լուրջ ուշադրություն պիտի դարձնեն հասարակական նախընտրելի լրացման գործին: Կենդանաբուժական բրիգադները բրիգադիւրներն անասնաբուժական աշխատողների հետ միասին պարտավոր են մասնակրկիտ կերպով մշակել ստացված կենդանիների ստուգման պլանը:

Անասնաբուժական լիազորը, լինելով զոոտեխնիկի կամ անասնաբույժ բժշկի ոգնականը, պետք է բնակչությանը պարզաբանե անասնաբուժական տնտեսությունից կոլեկտիվին անցնելու ոգուտներն ու առավելությունները: Կենդանաբուժական կոլխոզների ու սովխոզների փորձով—վորոնք 1930 թվականին փայլուն արդյունքների հասան,—անհրաժեշտ է ապացուցել մթերատու անասունների խոշոր նախիրների կազմակերպման անցնելու կարևորությունն ու նպատակահարմարությունը:

«Կոլխոզներում ստեղծենք համայնացված, առողջ նախիր» լոզունգը պետք է կազմի անասնաբուժական լիազորների աշխատանքի հիմքը: Նրանք պետք է լավ ծանոթանան շրջապատող անասնաբուժական տնտեսություններում վարակիչ հիվանդությունների տարածման չափի հետ: Անասնաբուժական լիազորները պարտավոր են լավ տեղյակ լինել իրենց հարյուրակ ծխի անասունների առողջության վիճակի մասին: Այս տեղյակությունը թույլ կտա անասնաբույժին, բրիգադիւրներին և բրիգադային գ.տ. արտադրական խորհրդակցությունը՝ ճշգրիտ կերպով նշել անասնաբուժական անհրաժեշտ միջոցառումների պլանը:

Կոլխոզային ակտիվը պետք է կանխի ամենագլխավոր վարակիչ հիվանդություններին—խլացավի, տուբերկուլյոզի, բուսի, վոչխարների ծաղկի, սիբիրախտի, պիրոպլազմոզի, կոտորածի, (վարակված վայրերում), խոզերի ժանտախտի և հավերի խոլերայի տեղափոխումը դեպի համայնացված նախիրները:

Բոլոր անասունները, վորոնք ստացվում են համայնացված ճնշեսության մեջ, պետք է նախապես ճարվեն կարանսինի ճնշեսը: Այստեղ նրանք մանրակրկիտ կերպով ստուգվում են անասնաբուժական պեքսոնալի կողմից՝ վարակիչ հիվանդություններ հայտնաբերելու համար:

Զիյերն ստուգվում են նրանց աչքերի մեջ հատուկ միջոց, «մալլեինա» սրսկելով, վորը հնարավորություն է տալիս հայտնաբերելու այն կենդանիներին, վորոնք հիվանդ են խլացավ հիվանդությանը: Ամբողջ խոշոր յեղջուրավոր անասունները հետազոտվում են տուբերկուլյոզը յերևան հանելու համար, այսպես կոչված՝ տուբերկուլինիզացիայի յեղանակով: խլացավով կամ տուբերկուլյոզով հիվանդ կենդանիներ հայտ-

նաբերելու դեպքում բժշկը ցուցմունքներ է տալիս, թե ինչպես վարվել նրանց հետ:

Քոսով նիվանդ կենդանիներ յերեկան բերելու դեպքում կոլխոզի վարչությունը միջոցներ է ձեռք առնում նրանց կարանսինում յեղած ժամանակ բժշկելու համար:

Յեղջուրավոր անասունների, խոզերի ու վոչխարների խմբերը, վորոնց մեջ հայտնաբերվում են վարակիչ հիվանդություններ, դառնում են անասնաբուժական աշխատողների մշտական արթուն հսկողության տակ: Այդ աշխատողները կիրառում են բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Կոլխոզների վարչությունները պարտավոր են առանց առաքելության կառավարի անասնաբուժական պետության պահանջներ, վորոնց նպատակն է առողջացնել կոլխոզային նախիրն և կանխել վնասները, վորոնք կարող են լինել մի վորեն վարակիչ հիվանդության մուտքի պատճառով:

Յեթե անասունների համայնացումն անցկացնելու մոմենտին տվյալ ուսյոնում տարածված է լինում մի վորեն ընդհանուր—վարակիչ հիվանդություն, անհրաժեշտ է հրաժարվել կենդանիները ընդհանուր շենքում հավաքելուց, մինչև վոր վերացվի հիվանդությունը: Համայնացված կենդանիները ստորագրություն թողնվում են առանձին կոլխոզների կողմից, մինչև վոր այդ մասին ցուցմունք տա կոլխոզին սպասարկող անասնաբուժական պետությանը:

Առանց անասնաբուժական պետության գիտության յեղ նրա բույրացության կենդանիներ չեն կարող տեղափոխվել կարանսինից կամ չեզոքացման տեղից դեպի նրանց համար յեղած բնակարան տեղեր:

Միայն ձիերին՝ խլացավի նկատմամբ և խոշոր յեղջուրավոր անասուններին՝ տուբերկուլյոզի նկատմամբ ստուգելուց և ամբողջ նախիրը մանրակրկիտորեն դիտելուց հետո, յերը կարողվի կենդանիների հաջողակ դրությունը յերկու շաբաթվա կարանտինը վերջանալուց հետո,—կարելի յե համայնացված կենդանիները տեղափոխել ընդհանուր շենքերը:

Բրիգադիւրներն ու անասնաբուժական լիազորները պետք է միջոցներ ձեռք առնեն նրա համար, վորպեսզի այն ձիերը, վորոնք կասկածելի յեն ճանաչված խլացավի նկատմամբ,—ուսենան առանձնացած ախոռ, առանձին ինվենտարով (լծասարք, խնամելու պարագաներ և այլն):

Միայն անասնաբուժական օրենքների պահանջները բարեխղճորեն կատարելու պայմանով, զորահավաքելով կոլխոզային հասարակայնությունը կենդանաբուժության առողջացման գործի համար,—մենք



կոլխոզներում կատեղծենք մթերատու, յեկամտարեր ապրանքային նախիրներ:

Անասնաբուժական լիազորները պետք է լինեն առողջ, համաշնացված նախրի համար պայքարողների առաջին շարքերում:

ԿԱՏԱՐԵՑԵՔ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Ֆերկրամասի կենդանաբուծության առջև կանգնած հիմնական խնդիրների հաջող լուծումը սերտ կերպով կապված է կոլխոզներում անասնաբուժական մինիմումի պահանջներն անհապաղ կիրառելու հետ:

Ֆերկրագործի մը Հյուսիսային Կովկասի կենդանաբուծության բարձրացման մասին իր վերջին վերոշման մեջ տվեց հաստատուն առաջադրություն, — 1931 թվականին հաջողեցնել անասնաբուժական մինիմումի հիմնական պահանջների կատարումը կոլխոզների կողմից, վերջինք նպաստում են կոլխոզային նախիրներին առողջացմանը:

Փորձը ցույց է տվել, վոր շատ կոլխոզներ, սկսելով ապրանքային կենդանաբուծության (որինակ, կաթնա-ապրանքային ազարակի, կամ խոզաբուծության) ծավալումը, հաշվի չեն առնում անասնաբուժական բնույթի պահանջները: Կաղմելով արտադրական պլաններ, ընտրելով հողամասեր՝ կովանոց, խոզանոց և այլն կառուցելու համար, կոլխոզների վարչութիւնները մինչև այժմ միշտ չեն դիմում անասնաբուժին, խորհուրդ ու ցուցմունք ստանալու համար: Սովորաբար այդ մասին մոռանում են և հույս են դնում տեղական «գիտուններին» վրա («ծերերն ամեն ինչ գիտեն»):

Այդպիսի սխալ մոտեցումը դեպի յեկամտարեր, ապրանքային կենդանաբուծություն ստեղծելու ամենագլխավոր պայմաններից մեկը՝ հասցնում է բավական տխուր հետևանքների: Այստեղ ցայտուն որինակ կարող է ծառայել «Կարմիր փարոս» կոլխոզը, վորտեղ, նախիրն՝ թռչունների չաղացման կայանում, թռչնաբուժական տնտեսութիւն էր ծավալվել: Հետևանքն այն յեղով, վոր տնտեսության մեջ, նրա աշխատանքի առաջին տարում, յերևաց խուլերա, վորը վրջնացրեց զգալի քանակութեամբ ցեղային թռչուններ:

Վորպես կանոն, կաթնա-ապրանքային ֆերմաների հողամասեր ընտրութիւնը խոզաբուծական, թռչնաբուծական և այլ կոլխոզներում պետք է տեղի ունենա անպայման անասնաբուժի մասնակցութեամբ, վորը տալիս է յեզրակացութիւն այդ հողամասի անասնաբուժական սանիտարական հաջողակութեան մասին, նշելով այն բոլոր մոմենտները, վորոնք կարող են բացասաբար անդրադառնալ կենդանիների առողջու-

թյան վրա: Ախոռների, կովանոցների, խոզանոցների և այլն շինարարութիւնն ու կահավորումը պետք է հաշվի առնեն անասնաբուժական և կենդանական առողջապահութեան պահանջները:

Անասնաբուժական և զոոտեխնիկական պերսոնալին տնտեսութեան պլանավորմանը, նրա շինարարութեանն ու կահավորմանը ներդրւելը կողմն կոլխոզներին՝ ստեղծելու համաշնացված նախիրների պահպանութեան պատշաճ պայմաններ:

Անասնաբուժական մինիմումի գլխավոր պահանջները կոլխոզներում 1931 թվականի համար առաջադրում են հետևյալ միջոցառումները. —

1) Ամենուրեք կառուցել անասնական գերեզմանոցներ և նորոգել յեղածները. պարտադրաբար հավաքել բոլոր գիականները և նրանց տեղ հասցնել հատուկ սայլով:

2) Անհապաղ կերպով հայտնել անասնաբուժական պերսոնալին, կամ գյուղխորհրդի ու միլիցիայի ներկայացուցիչներին վարակիչ հիվանդութեան նշանները յերևալու և կենդանիների կոտորվելու մասին:

3) Հատկացնել ու կահավորել հատուկ շենքեր՝ իբրև չեղոքավայրեր բոլոր այն կենդանիների համար, վորոնք հիվանդ են և կասկածելի յեն վարակիչ հիվանդութեան նկատմամբ:

4) Անպայման մաքրել և վարակազերծ անել այն շենքերը, վորտեղից հեռացվել են վարակված կենդանիները:

5) Անասնաբուժական պարտադիր հետազոտութիւն այն բոլոր կենդանիների, վորոնք մուտք են գործում համայնացված անասնային տնտեսութիւնները (անասնագոմերը): Կոլխոզներում նոր ստացվող կենդանիների պարտադիր պահվածք կարանտինում:

6) Արտավայրերի, ջրելու տեղերի, սայլերի ճանապարհների պարտադիր պարբերական դիտում և նրանց մաքրումը լեշերից, վոսկորներից, կմախքներից և այլն:

7) Նախիրների պարտադիր անասնաբուժական ստուգում՝ դարնան արտատեղերը տանելուց և աշնանը մուտքը վերակրելն սկսելուց առաջ:

8) Հատուկ կայանների կառուցում աղտեղութիւնների ու ալրի համար, թույլ չտալով, վոր աղբակույտները լինեն գետերի, լճակների և արածատեղիների մոտ:

9) Թափառական շները վրջնացում:

10) Արդելը համայնացված ու չհամայնացված խոզերին առանց խնամողի բաց թողնելը դեպի կոլխոզի (գյուղի) փողոցները:

11) Պարտադրաբար առանձին պահել այն ձեռքերին, վորոնք հետադրաման ժամանակ կասկածելի չեն ճանաչված խլացավի նկատմամբ:

12) Կոլխոզներին մատակարարել անասնաբուժական դեղանոցներ:

ԻՆՉՈՒ ԱՅՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿՈԳՆԵՆ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ

Դիակների ճիշտ հավաքումը չափազանց կարևոր նշանակություն ունի կոլխոզային կենդանաբուժության առողջացման գործի համար: Մինչև հիմա մենք ունենք շատ խոշոր կոլխոզներ, վորոնք իրենց չեն ապահովել ճիշտ կառուցված անասնային գերեզմանոցներով: Հողամասերը պլանավորելիս միշտ չի հատկացվում վորոշ տարածություն տնտեսային գերեզմանոցի համար, վորը միանգամայն համապատասխան լինելու անհրաժեշտ պահանջներին (չոր, վոչ անտառոտ, արոտածեղերից ու ջրերու տեղերից հեռու): Նույնպես ամեն տեղ միջոցներ չեն ձեռնարկված անասնային գերեզմանոցները կահավորելու, շրջանաձև ցանկապատեր կառուցելու և փոսեր (1¹/₄ մետր խորությունը և 2¹/₂ կես մետր լայնությունը) փորելու համար: Շատ տնտեսություններ թույլ են տալիս անասուններին արածացնել գերեզմանոցներում, վոր հանդիսանում է իսկական վնասարարություն:

Կենդանիներն ու թռչուններն դիակները պետք է թաղվեն միայն անասնային գերեզմանոցներում և վորոշ խորությունը (կենդանիները — 2 մետր, թռչունները — 1 մետր): Այս մասին շատ է զբաղված ու խոսված: Այնուամենայնիվ մինչև այժմ դիակները թափվում են վորտեղ ուտես, կամ թե թաղվում են վորտեղ պատահի: Թե ինչ հետևանք է ունենում այդ—կարելի չէ բերել Միլլերովիչի ռալոնի յերկու կոլխոզների օրագրերից: Մի բրիգադայում ձիու դիակը, վորը սատկել էր օրերից օրերի, ժամանակին չտարվեց անասունների գերեզմանոցը: Կոլխոզի խոզերը հասան մինչև դիակը և լափեցին նրա մի մասը: Հետևանքն այն յեղավ, վոր մի անդամից քսան խոզ սատկեց սիրերտալից: Մի ուրիշ կոլխոզ թռչնանոցը կառուցեց սայլերի ճանապարհի մոտ: Գյուղացիները, վորոնք դնում են շուկա, ճանապարհին զցում են հավերի դիակներ, վորոնց շները քարշ են տալիս թռչնային տնտեսության բակը: Այս ճանապարհով թռչնանոցը մուտք գործեց խոլի-րան, վորը սատակ պակասեցրեց թռչունների թիվը:

Յուրաքանչյուր կոլխոզում պետք է լինի դիակների տեղափոխության

սայլ: Նա գտնվում է կենդանաբուժական բրիգադայի բրիգադիերի տրամադրության տակ և չի կարող ոգաագործվել ուրիշ նպատակներով (մեծավանդ կեր տեղափոխելու համար):

Իր ժամանակին ձեռնարկված կանխիկ միջոցները չափազանց կարևոր նշանակություն ունեն վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար: Այս պատճառով անասնաբուժական միջոցները պահանջում են, վորպեսզի բոլոր կոլխոզիկները, վորոնք խմբված են կենդանաբուժական բրիգադայում (հատուկ, ճյուղային), գիտենան, վոր իրենք պարտավոր են համայնացված կենդանիների յուրաքանչյուր հիվանդանալու դեպքի մասին հայտնել բրիգադիերի ոգնականին, կամ իրեն, բրիգադիերին: Բրիգադիերի ոգնականը կամ բրիգադիերը առանձնացնում է հիվանդ կենդանուն և նրան ուղարկում անասնաբուժական կայանը, կամ թե բրիգադ է կանչում անասնաբուժական պերսոնալին:

Կենդանիների ընդհանուր շենքում վարակի տարածման առաջնադեմը համար յուրաքանչյուր կոլխոզ պիտի հարմարեցնեն ու կահավորեն չեզոքապայքը: Այստեղ կենդանաբուժական բրիգադան ուղարկում է բոլոր կենդանիներին, վորոնք կասկածելի չեն այս կամ այն վարակիչ հիվանդության նկատմամբ:

Անասունների համայնացման կամպանիան պահանջում է անհապաղ կերպով առանձնացնել ու կահավորել կարանտինի շենքերը: 1930 թվականին կարանտինի շենքերի անպատրաստությունն այն հետևանքն ունեցավ, վոր զանազան վարակիչ հիվանդությունների փոխանցման շնորհիվ անասուններ կոտորվեցին: Շատ ռալոններում այս բանը վիժեցրեց համայնացված նախիրներ կազմակերպելու աշխատանքը և անհատականների աչքում վարկաբեկեց հենց խոշոր կենդանաբուժական կոլխոզների ստեղծման գաղափարը:

Կոլխոզների վարչությունները, ինչպես նաև գյուղխորհուրդների նախագահությունները, պետք է, ինչ կերպ էլ լինի, առանձնացնեն և կահավորեն կարանտինի շենքերը: Միայն այդ պայմանով կարելի չէ կոլխոզներն ապահովել ամեն տեսակ վարակի փոխանցումից և թույլ չտալ համայնացված կենդանիների կոտորած:

Կարանտինում համայնացվող կենդանիները պետք է ապահովվեն անասնաբուժական հսկողությամբ և սպասարկող պերսոնալի մշտական դիտումով: Կերը պետք է ժամանակին տեղ հասցվի և լիովին համապատասխանի կարանտինում գտնվող կենդանիների քանակին: Միայն անասնաբուժական հսկողությունից թույլտվություն ստանալուց հետո կենդանիները կորող են թողնվել ընդհանուր շենքերը:

Վարակիչ հիվանդութիւններէ դեմ մղվող պայքարը դա պայքար է մանրէներէ (միկրոբներէ) դեմ: Այս պատճառով անասնաբուժական միջոցները պահանջում են պարտադրաբար մաքրել և վարակազերծ անել այն շենքերը, վորտեղից հեռացվել են վարակիչ հիվանդութիւն ունեցող կենդանիները:

Յուրաքանչյուր կոլխոզ պէտք է ունենա վարակազերծ անող միջոց-
ներէ պաշար: Ախտահանիչ միջոցների ցուցակը և նրանց քանակը կու-
խողին տալիս է անասնաբուժը, վորը հսկում է համայնացված նախ-
ըին: Անասնաբուժը հաշվի յետնում կենդանիների յեղած քանակը
և շենքերի ծավալը, ինչպէս նաև այն հիվանդութիւնները, վորոնք
ամենից հաճախ են յերևում տվյալ ռայոնում: Նայած այդ տվյալներին,
անասնաբուժական պերսոնալը հայտեր (заявки) է տալիս անհրաժեշտ
վարակազերծ անող միջոցներ ստանալու: Պատվերն ուղարկում է հե-
տևյալ հասցեյով.—Ростов на-Д., улица Энгельса—99—6, склад ве-
теринарного снабжения. Այս պահեստը վարում է անասնաբուժական
գույքի հատուկ վաճառքը: Նույն պահեստին պետք է ուղարկել անաս-
նաբուժական դեղանոցներ ստանալու պատվերը:

Բոլոր ռայոններում այժմ տեղի յետնենում անասնաբուժական
սանիտարների պատրաստութիւնը: Նրանք պետք է սովորեն, թե ինչ-
պէս ցույց տալ առաջին ոգնութիւնը հիվանդացած կենդանիներին,
այլ և ինչպէս և ինչպիսի պիտի վարակազերծ արվեն շենքերը: Ուստի
ամեն մի կոլխոզ պէտք է ունենա անասնաբուժական դեղանոց: Անաս-
նաբուժական միջոցներ այս կետը պետք է անպայման իրականացվի
1931 թվականին: Անհրաժեշտ անասնաբուժական դեղարանի չափի
մասին ճշգրիտ ցուցմունքներ տալիս է տեղում անասնաբուժը:

Արտատեղային հիվանդութիւնները—սիրիքախտ, պիրոպլազմոզ,
վորդացավ(глистная болезнь)—չառ կենդանիների յեն գերեզման տա-
նում: Կոլխոզները պետք է մշտական և համառ պայքարվող են կենդանաբու-
ժութիւն մեջ կորստները պակասեցնելու համար: Այս պատճառով ան-
հրաժեշտ է դարձնել կազմակերպել արտատեղերի դիտում և մաքրել
այդ տեղերը լեշերից ու վոսկորներից:

Արտավայրերի դիտումը, իսկ վորտեղ հարկավոր է, նրանց չո-
րացումը, հնարավորութիւն կտա կանխել նախիրների մեջ կենդանա-
բուժութիւն այնպիսի ցեցերն, ինչպիսին են՝ սիրիքախտը, պիրոպլազ-
մոզը, յերիզախտը (фасциозез):

Արտավայրերն առողջացնելու միջոցառումները պետք է անպայ-
ման մտցվեն կոլխոզների արտադրական պլաններին մեջ, այն ռայոն-

ներում, վորտեղ, արածելու շրջանում, տեղ ունեն կենդանիների մըը-
տական վարակիչ հիվանդութիւնները:

Պայքար յուրաքանչյուր կենդանու առողջութիւն համար—անա
պայքար վա լողունդը: Ահա թե ինչու անասնաբուժական միջոցներ
մշտում է մի այնպիսի կարևոր միջոցառում, ինչպիսին է դարձնել
անասունների դիտումը նախ քան նրանց արտավայրերը տանելը և
աշնանը, նախ քան նրանց մուրքով կերակրելը: Դիտումը հնարավո-
րութիւն կտա առանձնացնել բոլոր հիվանդ ու կասկածելի կենդանի-
ներին, ինչպէս նաև թուլելիք, վորոնք չաղացում են պահանջում:

Գարնանն անասնաբուժական պերսոնալը վարակված կետերում
անց է կացնում անհրաժեշտ, հիվանդութիւնները կանխող պատվաս-
տումներ:

Արտատեղի հարցը պետք է մանրակրկիտորեն մշակվի բրիգա-
դային արտադրական խորհրդակցութիւնը և վերջնականապէս պետք է
ճշովի համակոլխոզային արտադրական խորհրդակցութիւն մեջ: Այս
հարցի քննութիւնը պետք է ներգրավվեն անասնաբուժական և զոո-
տեխնիկական պերսոնալը: Միայն լուրջ մոտեցումը դեպի արածման
օեղոնի նախապատրաստութիւնը—կարող է կոլխոզային կենդանաբու-
ժութիւնն ապահովել ապարդիւն կորստներէ:

Թափառական շները վոչնչացնելու վերաբերյալ անասնաբուժա-
կան միջոցներ պահանջը հիմնված է այն բանի վրա, վոր այդ կենդա-
նիները հանդիսանում են համայնացված նախիրների վնասատուներ:
Թեև ինքը, շունը չի հիվանդանում մի քանի վարակիչ հիվանդու-
թիւններով, բայց պատահուտելով վատ կահավորված անասնային գե-
րեզմանոցներում յեղած դիակները, կամ թե ուտելով թափված դիակ-
ները,—տարածում է վարակը (որինակ, սիրիքախտը, հավերի խոլե-
րան), այսպիսով վտանգի յենթարկելով համայնացված նախիրները:
Թափառական շները մի առանձին վտանգ են ներկայացնում քոսը և
կատաղութիւնը տարածելու վերաբերմամբ:

Թափառական շներին վոչնչացնելը պետք է տեղի ունենա կաղ-
մակերպված կարգով: Գյուղխորհրդները կոլխոզների վարչութիւններին
հետ միասին պետք է մանրակրկիտորեն մշակեն այս հարցը, վորպէս-
դի թույլ չտան խտտորումներ և պահապան շների գլխովին վոչնչա-
ցում:

Նոգելին առանց խնամքի՝ կոլխոզի փողոցները բաց չթողնելը
նույնպէս նպատակ ունի արգելել խոզերի վարակիչ հիվանդութիւն-
ների մուտքը դեպի համայնացված նախիրները: Անասնաբուժական

մինիմումի այս կետի կատարումը պետք է ստուգվի կանանց անասնաբուժական լիազորների կողմից:

Խլացավը պետք է լիկվիդացիայի յենթաբաժնի Հյուսիսային Կովկասում: Գյուղատնտեսությանը և Կարմիր բանակին հարկավոր են խլացավից բոլորովին զերծ ձիեր: Մեղ հարկավոր է ամենակարճ ժամանակամիջոցում առողջացնել ձիերի քանակը, քանի վոր յերկրամասը հսկայական կորստներ է ունենում: Ձին դեռ 2-3 տարի կլինի Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսության հիմնական քարղող ուշվել: Բացի դրանից, մենք վորքան շուտ ազատվենք խլացավից, այնքան արագ կապահովվենք հեծելազորային ձիաբուծության վերելքը, վորը կաբմիր հեծելազորը լրացնելու բազան է:

Այս պատճառով անասնաբուժական մինիմումը պահանջում է ապահովել ձիերին առանձին պահելու գործը, վորոնք հետադրոժան ժամանակ, խլացավի նկատմամբ կասկածելի յեն ճանաչված: Կոլխոզները պետք է ապահովեն ձիերի իր ժամանակին և ճշգրիտ պաշտպանությամբ, վորը հնարավորություն է տալիս հայտնաբերել խլացավի նկատմամբ կասկածելի ձիերին:

ՍՈՑՄՐՑՄԱՆ ՈՒՂԻՅՈՎ

1930 թվականի փորձը ցույց տվեց, վոր այնտեղ, ուր գյուղական հասարակայնությունը ոգնության է յեկել հողային օրգաններին, այնտեղ անասնաբուժական մինիմումը վոչ միայն կատարվել, այլ և գերակատարվել է:

Անասնաբուժական լիազորների աշխատանքի ստուգատեսը հայտնաբերեց օրինակելի ախտիվիստներ, վորոնք մեծ ոգուտ բերին համայնացված կենդանաբուծության առողջացման գործին: Վորպես օրինակելի անասնաբուժական լիազորի, մատնանշում ենք Գրադինսկի գյուղխորհրդից ընկեր Մ. Կ. Կրավչենկոյին: Նա չքավոր է և առաջիններից մեկն է մտել Իգնատևսկու կոլխոզը: Անասնաբուժական լիազոր ընտրվելուց անմիջապես հետո նա դարձավ անասնաբուժական գիտելիքների ախտիվ տարածողը ընկ. Անդրեևի անվան կոլխոզի Ե-րդ բրիգադայի կոլխոզնիկների մեջ: Նրա, վորպես անասնաբուժական լիազորի, աշխատանքի ցուցանիշը կարող է ծառայել այն, վոր կոլխոզնիկների միջոցներով գյուղում կազմակերպվել է կենդանիներին առաջին ոգնություն հասցնելու կայան:

Գծախտաբար այդպիսի անասնաբուժական լիազորներ մենք առաջում յերկրամասում շատ քիչ քանակությամբ ունենք: Անասնաբուժական լիազորների մեծամասնությունը դեռ ևս վոչ լրիվ բեռնվածությամբ է աշխատում, այս պատճառով ել, իհարկե, ձգձգվում է անասնաբուժական մինիմումի կատարումը կոլխոզների կողմից:

Անասնաբուժական լիազորների աշխատանքը պետք է ախտիվացնել: Հարվածայնության և սոցիալիստական մրցության մեթոդներով պետք է թափահարել անասնաբուժական լիազորներին: Հարևան կոլխոզները պետք է կազմակերպեն անասնաբուժական լիազորների սոց. մրցություն, պայմանագրերի մեջ մտցնելով հետևյալ ձևերակումները:

ա) Կոլխոզի լավագույն անասնաբուժական-սանիտարական դրություն: Անասնային գերեզմանոցների ճիշտ կահավորում, դիակներ իր ժամանակին ժողովում և ճիշտ տեղափոխություն, վարակված շներերի ժամանակին մաքրում և ախտահանում:

բ) Լավագույն կապ գ. տ. արտադրական խորհրդակցության հետ, անասնաբուժական անհրաժեշտ միջոցառումներ լավագույն ընդգրկում արտադրական պլանով, լավագույն ինֆորմացիա կոլխոզնիկներին՝ համայնացված նախիրների դրության մասին:

գ) Անասունների ու թռչունների հետադոտման ամենալավ դրվածք, վորոնք թողնված են կոլխոզնիկների անհատական ոգտագործման համար:

դ) Իր ժամանակին հայտնաբերել անցնող անասնախմբերին և այդ մասին տեղեկություն տալ անասնաբուժին: Ծշտությամբ կատարել ստանձնած պարտավորությունները—անասնաբուժական-սանիտարական վկայագրերն ստուգելու և հիշյալ անասնախմբերին չթողնել համայնացված անասունների ջրելու տեղը:

յե) Ժամանակին հայտնել անասնաբուժին վարակիչ հիվանդությունների դեպքեր յերևան գալու մասին, ինչպես նաև անասնաբուժական օրենքների բոլոր խախտումների մասին:

զ) Գարնանն, անասուններին արոտավայր տանելուց առաջ, աշակցություն ցույց տալ անասնաբուժին և հայտնաբերել վարակիչ հիվանդությունների նկատմամբ վտանգավոր արոտավայրերը:

Ահա անասնաբուժական լիազորների միջև սոցիալիստական մրցություն պայմանագրերի հիմնական կետերը: Գյուղխորհրդներն ու կոլխոզները վարչությունները պետք է միջոցներ գտնեն լավագույն անասնաբուժական լիազորներին պրեմիաներ տալու համար:

Վերջում մենք կմատնանշենք, Վոր ԽՍՀՄ Հողօգտագործի ու Կոլխոզ-
կենտրոնի վորոշմամբ, համայնացված նախիրների առողջացման միջո-
ցառումները անցկացնելու համար պատասխանատու յեն կոլխոզների
ղեկավարները: Կոլխոզների վարչությունները և գ. տ. արտադրական
խորհրդակցություններն, անասնաբուժական պերսոնալի հետ սերտ
համագործակցությամբ պետք է ապահովեն անասնաբուժական միջո-
ցամբ բոլոր պահանջների լրիվ կիրառումը:



За ответственного редак-
тора
А. Г. Авахян
За техредактора
Р. Гюзальян

№ 64
1931

Сд. в наб. 14/X—1931 г.
Сд. в печать 24/X—1931 г.
Об'ем 1 1/2 печ. листа
Тираж 2000 экз.

ՀՀ Ազգային գրադարան



NL0209110

56749

Գինը 6 10 400.

С. Х. 5 О.

Цена 10 коп.



На армянском языке

Л. М. Крапивнер

За высоко-товарное колхозное стадо

(Выполняйте ветеринарный минимум)

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ“